Էսաց.—Էնենց պախիմ՝ ծաղկը պէս. արխային, խլիսուն, տ'երթամ յէռջիւ։ Ամա խրօխպէր, իս պիպիկ [1]) իմ, մէկ ջուխտ ըմ սօլ [2]) ընձը խամա կ'տաս կարիլ։

Էսաց.—Էս սհաթիս կ'երթամ, կ'տամ կար։

Էն սհաթին էլաւ, կինաց ջուխտ ըմ սօլ էտու կարիլ. իպէ իտու տղէն, տղէն առից, խագաւ։

Խրօխպէր էսաց.—Ո՛րտի, խլիսուն զնախիր կ'տանիս Սասմայ սարի յիտիւ՝ չայիր [3]). սըւտակ [4]) քեար կայ, սըւտակ քեարի տակ յախպուր [5]) կայ, էն յախպրի վերայ կէսօր կ'բեարհաւիս, իս քեզի կէսօրին խաց կ'առնիմ, կ'կեամ։

Խլիսուն Դաւիթ խագաւ զսօլիր, զնախիր առից, տարաւ սար։ Մէկ սպնդրի ծառ էլ քեշից, էտի վեար ուր թիւին, զնախիր կ'քիշի։ Նախիր էխան սար, տեսաւ, որ արջիր, կէլիր, ասլանքտիր [6]), կափլանքտիր [7]) փախան. ինչ Դաւիթ վուտ կ'զարկէր գետըն, գետըն կ'դնդէր [8]), էնու ձէնէն արջիր, կէլիր փախան։

Դաւիթն էլ ինկաւ յիտիւքիր, որու խասաւ՝ էզար, ժողվից. ինչ արջ կէր, կէլ կէր, ասլան կէր, զափլան կէր՝ ժողվից, իպէ մեանչ նախրին, խառնից զնախիր*)։

Ճաշուցին զնախիր ժողվից, տարաւ չայիր սըւտակ քեարի տակ վեար յախպրին։ Տեսաւ, որ չոկ [9]) գեղը նախրուրդ մ'էլ տաւար բիրի էնդեղ կ'երբծայ, էսաց.—Ա՛յ նախրուրդ, էսաց, արի՛ իս տիւ ախպէր ըլնինք։

Էրկուս ախպէր էլան։

Դաւիթ էսաց.—Իս քեաղցած իմ, ի՞նչ տ'ուտինք։

Նախրուրդ էսաց.—Դաւիթ, միր գեղ սասման ժամ ի, որ տիւ քեաղցած իս, տիւ կաց իմ տաւար, իս էրթամ ճաշ պիրիմ՝ ուտինք։

---

[1]) Ոտաբոբիկ։ [2]) Մաշիկ, ոտնաման։ [3]) Մարգագետին։ [4]) Սպիտակ։ [5]) Աղբիւր։ [6]) Առիւծներ։ [7]) Վագրներ։ [8]) Թնդաց։ [9]) Առանձին, զատ։

*) Քերականօրէն անհասկանալի է։